ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» ---------- 2016թ. N------Ա

ՈՐՈՇՈՒՄ

ՍՈՒՐԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ
ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի օգոստոսի 31-ի «Հայաստանի Հանրապետությունում պետական և հասարակական նշանավոր գործիչներին նվիրված հուշարձանների իրականացման կարգը հաստատելու մասին» N 551 որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետը՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

Տալ համաձայնություն ՀՀ վաստակավոր լրագրող Սուրեն Գրիգորյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Վարդանանց փողոց h.14 հասցեում փակցնելու համար:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ – ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ
«ՍՈՒՐԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ»
ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀՀ վաստակավոր լրագրող Սուրեն Գրիգորյանը ծնվել է 1912թ. դեկտեմբերի 22-ին Երևան քաղաքում, արհեստավորի ընտանիքում:

1930թ. ավարտել է Երևանի Կոռուպսկայայի անվան միջնակարգ դպրոցը: Նույն թվականի սեպտեմբերին նշանակվել է Թալինի շրջանի Իրինդ գյուղի տարրական դպրոցում՝ որպես հայերեն լեզվի ուսուցիչ:

1931-1932թթ. աշխատել է տեսուչ լուսավորության աշխատողների արհմիության կենտրոնական վարչությունում: Այնուհետ աշխատել է «Կուլտ ֆրոնտ» թերթում՝ որպես պատասխանատու քարտուղար:

1935թ. ՀԿԿ կուսակցական կենտրոնական կոմիտեի որոշմամբ նշանակվել է Թալինի շրջանի «Բոլշևիկյան ֆրոնտ» թերթի պատասխանատու քարտուղար: Հետագայում նույն թերթում նշանակվել գլխավոր խմբագիր: Ավարտել է Երևանի պետական համալսարանի «Հայոց լեզվի և գրականության» ֆակուլտետը՝ ստանալով հայոց լեզվի և գրականության մասնագետի կոչում:

1940թ. եղել է Թալինի շրջանի դեպուտատ: 1940-1941թթ. աշխատել է «Սովետական Հայաստան» թերթում՝ որպես գրական աշխատակից պրոպագանդայի բաժնում:

1941-1956թթ. ծառայել է Սովետական բանակում: Մասնակցել է Գելենջիկի, Կերչի, Տուապսեի, Ղրիմի և այլ բնակավայրերի ազատագրմանը ֆաշիստական Գերմանիայի զինվորական ուժերից: Պատերազմում մասնակցել է հայկական դիվիզիայի շարքերում: 1945թ. եղել է Անդրկովկասյան զինվորական օկրուգի «Լենինյան շքանշան» Թբիլիսի քաղաքում լույս տեսնող թերթի պատասխանատու քարտուղար:

Պարգևատրվել է «Կարմիր աստղ» շքանշանով, «Մարտական արիություն», «Կովկասի պաշտպանության», «Պատերազմի վետերանների Սովետական կոմիտեի» մեդալներով, «Նորմանդիա-Նեման» պատվոշքանշանով:

1956թ. Սովետական բանակի շարքեր զորացրվելուց հետո նշանակվել է ՀՀ առողջապահության նախարարության «Առողջապահություն» ժուռնալի պատասխանատու քարտուղար, այնուհետև ՀՀԿԿ-ի որոշմամբ նշանակվել է Հայաստանի Պետհրատի քաղաքական գրականության բաժնի վարիչ:

1957-1963թթ. աշխատել է «Երևան», ապա «Երեկոյան Երևան» թերթի գլխավոր խմբագրի տեղակալ:

1963թ. ԽՍՀՄ Մինիստրների խորհրդին առընթեր հեռուստատեսության և ռադիոհաղորդումների պետական կոմիտեում՝ որպես պրոպագանդայի խմբագրության ավագ խմբագիր, հետագայում արտաքին հաղորդումների խմբագրության ավագ խմբագիր:

Հայկական Սովետական Սոցիալիստական Հանրապետության գերագույն սովետի նախագահության 1977թ. մարտի 4-ի հրամանագրով Սուրեն Գրիգորյանին շնորհվել է «ՀՍՍՀ վաստակավոր ժուռնալիստ» պատվավոր կոչումը:

Սուրեն Գրիգորյանը մահացել է 1980թ. մայիսի 14-ին:

ՀՀ վաստակավոր լրագրող Սուրեն Գրիգորյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Վարդանանց փողոց հ.14 հասցեում փակցնելու վերաբերյալ միջնորդություններ են ներկայացվել Հայաստանի ժուռնալիստների միության նախագահ Ա.Գևորգյանի և ՀՀ քաղաքացի Մ. Գևորգյանի կողմից:

Հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի օգոստոսի 31-ի «Հայաստանի Հանրապետությունում պետական և հասարակական նշանավոր գործիչներին նվիրված հուշարձանների իրականացման կարգը հաստատելու մասին» N551 որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետը՝ Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում սույն որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՍՈՒՐԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ/ ԿԱՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Սուրեն Գրիգորյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում լրացումներ և/ կամ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՍՈՒՐԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ/ ԿԱՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Սուրեն Գրիգորյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերում լրացումներ և/ կամ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ